

դէպի Մէրվ, որ անոր գերութեամբն ու սպանութեամբը վերջացաւ, տեղի ունեցած է 201ի առաջին քառորդին (ուարի): Ըստ այսմ Հատիմի ոստիկան անուանուելը դժուարաւ թէ յառաջ քան 201 տարին եղած ըլլայ:

Հատիմ Հայաստան հասաւ այն ժամանակ, «երբ արդէն ալ-Մուտազիլներու եւ հասարակութեան մէջ քաղաքական պատերազմ ծագած, եւ զիրար փոխադարձաբար դրեթէ ոչնչացնելէն յետոյ խաղաղութիւն կնքած էին»²⁴: Կ'երեւայ թէ Սուլէյման բ. Աճմէդ այս ժամանակն արդէն այլ եւս ոստիկան չէր: 197ի առանձնական նաքարակիր մը վրայ (biarrān) ալ-Աբբաս բ. Չուֆար կ'անուանուի²⁵, որ արդէն յառաջագոյն 193ին Հայաստանի ոստիկան էր²⁶ եւ հաւանականաբար 197ին երկրորդ անգամ կ'առաքուի Սուլէյմանին տեղն անցնելու համար:

Տ ո ո ն բ է ը դ ²⁷ 198 տարւոյն առանձնական դահեկանի մը մէկ հատակոտորին վրայ՝ յետսակողմը հաւատոյ նշանաբանին տակ կը կարդայ. Իբն Աբդալլահ ալ-Կ...²⁸, զոր Աբի Աբդալլահ ալ-Կ...²⁹ սրբազերելու է: Դժբախտաբար իսկական անունը չէ մնացած: Հաւանական է թէ այս դրամի վրայ ալ-Աբբաս բ. Չուֆարի յաջորդն, որ թերեւս միանգամայն Հատիմի անմիջորդական նախորդն էր, յիշուած ըլլայ:

Բնականաբար ստոյգ չէ՝ թէ ալ-Աբբաս եւ Իբն Աբու Աբդալլահ ուղղակի ոստիկաններ էին: Բայց որովհետեւ Սուլէյմանի անունը 197 տարւոյն դահեկանի մը վրայ կը յիշուի, շատ տարօրինակ պիտի ըլլար 198 տարւոյն դրամներուն մէկուն վրայ ալ անոր անունը չի յիշուի, եթէ նա երկար ժամանակ ոստիկան եղած ըլլար: Ալ-Աբբաս յառաջագոյն արդէն ոստիկան էր. այս պատճառաւ շատ անհաւանական է՝ թէ նա հիմայ աւելի ցած պաշտօն մ'ունեցած ըլլայ:

Մադին Բաջունայիի 199 տարւոյն դա-

հեկաններն³⁰, որոնց վրայ հաւատոյ նշանաբանը դաշտակին մէջ, լիլլախի վերն եւ Չուճըրի յաստայինի վարը կը գտնուի, դժբախտաբար ամենեւին տեղեկութիւն չեն տար՝ թէ ո՛վ էր այս ժամանակ ոստիկանը:

Ամէն պարագային Եակուբի տեղիքէն յայտնի է՝ թէ Հատիմ 201էն յառաջ ոստիկան անուանուած չէ: Արմինիայի 202 տարւոյն դահեկանի մը վրայ³¹ յետսակ. հաւատոյ նշանաբանին վարը բառ մը կը գտնուի, զոր Bartholomaei³² էրբ ܐܘܟ կը ներկայացնէ. Տ ի զ է ն հ ա ու զ է ն, էջ 306, կարծիք յայտնած է՝ թէ բառս Հատիմ պէտք է կարդալ: Միւսին փողերանոցէն 203 տարւոյն դահեկաններու վրայ միւսին տեղը որոշ կերպով կը տեսնուի Հատիմ³³: Ըստ այսմ Հատիմ 201էն մինչեւ ամէնէն քիչ 203 ոստիկանութեան պաշտօնն ունէր: Կանխաւ, 194—195, Եգիպտոսի ոստիկան էր³⁴:

Իբր նոր ոստիկան Հայաստանի, ինչպէս եւ Բարսիլն ընկճելու համար կ'առաքուի Եահեա բ. Մուադ բ. Մուալիմ, Բանու Չուճըրի պաշտպանաւորն³⁵, որ սակայն Բարսիլի դէմ քանի մը անորոշ ճակատներ կը մղէ³⁶, որով խալիֆան կը ստիպուի Իսա բ. Մուհամմէդ բ. Աբու Խալիֆ Եահեային օգնութեան առաքել: Այս Իսան Հայաստանի եւ Ատրպատականի ոստիկանութիւնն ստացաւ, իսկ Եահեան ալ-Չէղիրէի: Եահեա արդէն 206ին կը վախճանի եւ իւր ոստիկանութիւնը կը թողու իւր որդւոյն Աճմէդին³⁷: Նոյն տարին Իսա Չախլախիզ պարպուի Ատրպատականէն Հայաստան քաջուի, ուր սակայն մեծ դժուարութեամբ միայն կրնայ ինք զինքը պաշտպանել Սափադա բ. Աբդ ալ-Համիդ ալ-Չահահաֆիի դէմ:

Թէ՛ Եահեա բ. Մուադ եւ թէ՛ Իսա բ. Մուհամմէդ ծանօթ անձնաւորութիւններ են, որոնք նաեւ պատմագիրներէն կը յիշուին:

³⁰ Codrington, Numismatic Chronicle 1902, 271, Марков 33, Nr. 538.
³¹ Тизенг., Nr. 1733a.
³² Seconde lettre à Soret, Revue Belge de Numismatique 1861, 28.
³³ Կէրն Վ. Тизенг., Nr. 2840, Марков 41, Nr. 722. Ghalib Edhem, Musée impérial ottoman, Nr. 564, Anderson, Acta et Comment. Univers. Dorpat: VII, 2, Nr. 191.
³⁴ Kindī 147.
³⁵ Ja'qūbi II, 563.
³⁶ Tabarī III, 1039.
³⁷ Tabarī III, 1045.

²⁴ Marquart, 458, Ja'qubi II, 563.
²⁵ Zambaur, Num. Zschr. 36, 72, Nr. 64. Յռչկ վարը ܐܘܟ յետսակ. հաւատոյ նշանաբանը, վերն ալ Աբբաս, վարն էին Չուֆար. թուականը յետսակ. եզերքի ընթերցումն է՝ 201.
²⁶ Հմմտ. Ֆրոմմեր, Հանդէս Ամսորեայ 1928, էջ 266.
²⁷ Numi Cufici 73, Nr. 278 (Тизенг., Nr. 1682).
²⁸ ...عبدالله
²⁹ ...عبدالله
³⁰ ...عبدالله

չուին: Եահեա առ-Ռաշիդի ժամանակ 191ին Ատրիքի ոստիկան էր, ուր Աբու Կ-Նուրայի սպստամբութիւնը զսպեց³⁸ եւ սպստամբը դերի բռնելով առ-Ռաշիդին բերաւ³⁹: Սա կը յիշուի⁴⁰ իբրեւ մին՝ ալ-Մամունի առաջին կողմնակիցներէն:

Իսա բ. Մուհամմէդ մինչեւ 201 թահիր բ. ալ-Հուսէինի տակ կը ծառայէ առ-Ռաքա⁴¹, ապա Իբրահիմ բ. ալ-Մահդիբ սպստամբութեան ժամանակ ասոր կողմը կ'անցնի, սակայն յետոյ զինքը կը մատնէ եւ ալ-Մամունէն պատուով կ'ընդունուի⁴²:

Եահեա բ. Մուադ անունը մինչեւ հիմայ հայկական դրամներու վրայ չէ հանդիպած: 204ի Արմինիայի դահեկաններէն երեք տիպ կը ճանանք. ասոնց ամէնուն ալ հաւատոյ նշանաբանին երկրորդ մասը յետսակողմեան դաշտակին մէջ կը գտնուի եւ իրարմէ կը զանազանուին վերեւ եւ ստորեւ գտնուող անուններով. 1. Ասադ բ. Եահեա եւ Ալ-Հուսէին բ. Սադ⁴³, 2. Ահմէդ բ. Եահեա եւ Ալ-Հուսէին բ. Սադ⁴⁴, 3. Ահմէդ բ. Եահեա եւ Ալ-Բայիթ բ. Հայրաս⁴⁵: Դոտն, երբ առաջին դրամը կը ստորագրէ, որմէ միայն մէկ օրինակ — այժմ կորսուած — ծանօթ է մեզի, քովը հարցական նշան մը կը դնէ, այնպէս որ կասկած կը ծագի թէ գուցէ հոն, ինչպէս եւ երկրորդ տիպի քով Ահմէդ հոն, ինչպէս եւ երկրորդ տիպի քով Ֆրէն անունը կը գտնուի, մանաւանդ որ Տ ո ո ն Ահմէդ անունով դրամները, միայն Տ ո ո ն բ է ը դ ի ցուցակէն կրնայ ճանչցած ըլլալ, սակայն անոր տուած տեղեկութիւններն ասոր մասին կրնան նաեւ կանոնի ժամանակի մը վերաբերիլ⁴⁶:

Աճմէդ բ. Եահեայի տակ ամենայն հաւանականութեամբ Եահեա բ. Մուադի որդին հասկնալու է, որ հօրը կենդանութեան օրով ալ կրնար վարչական պաշտօն մը ունեցած ըլլալ:

³⁸ Tabarī III, 711.
³⁹ 192ին, Tabarī III, 732.
⁴⁰ Tabarī III, 734, 772.
⁴¹ Tabarī III, 1002.
⁴² Tabarī III, 1030—1034.
⁴³ Тизенг., Nr. 1759 = Dorn, Inv. 39, Nr. 467.
⁴⁴ Тизенг., Nr. 1758 ևս Tornberg, Numi Cufici 79, Nr. 308, Tab. V.
⁴⁵ Тизенг., Nr. 1760 ևս Tornberg, N. C. 79, Nr. 309, Tab. V.
⁴⁶ Փրէնի քով, Mscr. XI, 161, Nr. 251, ուր աս դրամը կը նկարագրուի, եզերքը կը գտնուի Խոսթ, անտարակոյ Ետքէն աւելցուած. In Upsala ex. huj. numi est احمد بن محمد. Ergo denuo numum in Mus. As. inspice. Կ'ման Խոսթ մը կը գտնուի նաեւ Mscr. XXXVI, 430, Nr. 208:

Յայտնի է թէ Ալ-Բայիթ բ. Հայրաս⁴⁷ հայրն է Մուհամմէդ բ. ալ-Բայիթ բ. Հայրասի, որ Ատրպատական ալ-Մուսափակիլի դէմ սպստամբեցաւ, 234ին պարտուեցաւ եւ 235ին զլիսատուեցաւ⁴⁸:

Նոյն ժամանակի Մադին Բաջունայիի դրամներու վրայ կը յիշուի 204ին Իբրահիմ բ. Ռեդադ (?) անունով մէկը⁴⁹, 205ին եւ 206ին Աբբաս բ. Աբու Ալիբ անձ մը⁵⁰, իսկ 206 տարւոյն դահեկանի մը վրայ⁵¹ ալ-Աբբաս անձնաւորութիւն մը (վերը)⁵² ալ-Աբբաս անունով մէկը (վարը): Ամէնքն եւ Եակուբ անունով մէկը (վարը): Ամէնքն ալ անձանօթ անձնաւորութիւններ, գուցէ դրամահատութեան վարիչներ են:

207 տարւոյն դրամներու վրայ կը յիշուի Իսա ալ-Մամունի անունով մէկը: Սոյն տարւոյն բոլոր առանձնական դահեկանները յետսակողմեան երեսին վրայ հաւատոյ նշանաբանին երկրորդ մասին մէջ երեք տիպ կը ցուցնեն. 1. վերն՝ Իսա ալ-Մամունի, կը ցուցնեն. 2. վերն՝ Մուհամմէդ իբն Աբդալլահ⁵³, վարը՝ Մուհամմէդ իբն Աբդալլահ, վարը՝ Մուհամմէդ իբն Աբդալլահ ալ-Բայիթ⁵⁴, համմէդ իբն Աբդալլահ, վարն՝ իբն Մուհամմէդ⁵⁵: Ասոնց վրայ կ'աւելնայ տակաւին դահեկան մը Արմինիայէն 207 տարէն, վերն ալ-Մամունի Իսա, վարը՝ Մուհամմէդ իբն Աբդալլահ եւ յառաջակողման վրայ վարն՝ Աբդալլախի⁵⁶:

Արդէն Տ ի զ է ն հ ա ու զ է ն սա մեկնութիւնը տուած է թէ՛ Իսա ալ-Մամունի անուն տակ նոյն ինքն Իսա իբն Մուհամմէդ իբն Աբու Խալիֆ հասկնալու է: Կը թուի թէ Մարկովի քով գտնուող, թ. 751 ա դրամը, մեկնութեանս ճշգրտութիւնը կը հաստատէ: Այս դրամներուն վրայ յիշուած միւս

⁴⁷ Տէս Տարարի III, 1379, Եակուբի II, 446, Բեյազըրի 330, Իբն ալ-Աթիրի քով VII, 27. البعث بن الجليس
⁴⁸ Մուսափակիլի Իբն ալ-Չալիս.
⁴⁹ Տարարի III, 1379—1389.
⁵⁰ Тизенг., Nr. 1766, Шерцль, Nr. 6130, Марков 41, Nr. 731, Dorn. Invent. 39, Nr. 463, տես եւ ստորեւ.
⁵¹ Հաւատոյ նշանաբան, վերը البعث بن الجليس, վարը Тизенг., Nr. 1779, 1786 (Frähn, Nova Suppl. 20, Nr. 298c. Այս օրինակին վրայ ալ-Աբբասի «գիւղ» զի՞ս մ'աւելի ունի):
⁵² Հոս ալ «գիւղ» զի՞ս մ'աւելի ունի. Марков 42, Nr. 748.
⁵³ Тизенг., Nr. 1792, Шерцль, Описание медалей и монет. Харьков 1912, Nr. 6138, էջ 64-65, Nr. 751a.
⁵⁴ Марков, 42, Nr. 751.
⁵⁵ Марков, 877, Nr. 751a.
⁵⁶ Тизенг., Nr. 1791.

Մուհամմեդ բ. Ատտարի դէմ կոուելի, որ Վրաստանի (Չուրղան) իշխանութիւնն իրեն կորզած էր: Բայց որովհետեւ նա ոչ կառավարել զիտէր, եւ ոչ ալ պատերազմիլ իրն Ատտարէն պարտուելով փախչելու ստիպուեցաւ, որով ալ Մամուն ուղարկեց Սալիդ բ. Եագիդ բ. Մագեադ, որուն իրն Ատտար եւ ուրիշ ապստամբներ հպատակեցան եւ որ Ալի բ. Շուարբ (Շուայր) Տիգրիսի կառավարիչ դրաւ⁷⁹:

Իբրեւ Սալիդի յաջորդ Եակուբի⁸⁰ կ'անուանէ Աբդալլահ բ. Մուսադ ալ-Ասադի, որ սակայն քիչ ժամանակէն կը վախճանի եւ փոխանորդ կ'անուանէ իւր Ալի որդին: Ասկէ ետքը կու գայ ալ-Հասան բ. Ալի ալ-Բադրիսի ալ-Մամունի: Ըստ Բելազորիի վերջինս 211ին ալ-Մուսաիմէն կ'անուանուի, մինչ ըստ Եակուբիի արդէն ալ-Մամունէն անուանուած է: Ասոր տեղապահն ի Վրաստան կը յորջորջուէր Իսահակ բ. Իսմայիլ բ. Շուայր, որ գուցէ վերոյիշեալ Ալի բ. Շուայրի եղբորորդին էր⁸¹:

Սալիդ բ. Եագիդ անունն արդէն 212ին առանձին գրամներու վրայ կը հանդիպի⁸²: Տիպը նոյն է, ինչպէս Աբդ ալ-Ալայի անուամբ գտնուածները, միայն տարբեր անուններով. վերը՝ Խալիդ բ. Եագիդ⁸³, վարն՝ Իբրահիմ բ. Չայդ⁸⁴: Սոյն անունները կ'երեւան ապա միեւնոյն տիպի գրամներու վրայ 213 տարիէն⁸⁵: 215⁸⁶, 216⁸⁷ եւ 217⁸⁸ տարիներու գրամներուն վրայ, որոնք երեքտողեան հաւատոյ նշանաբան ունին, վերը կը գտնուի Խալիդ իբն Եագիդ, վարն՝ Իբրահիմ իբն Ատտար, ամէնէն վերջը յիշուած դահեկանին վրայ բաց աստի բորբովին ստորեւ նաեւ օ մը: 216 տարւոյն քանի մը գրամները միայն վերը Խալիդ իբն Եագիդ ունին եւ վարն ոչինչ⁸⁹: Նմանապէս Սալիդ բ. Եագիդի անունը կու գայ Մագիին Բաջունայիսի գրամներու

⁷⁹ Marquart, անդ 408, ըստ վրական ժամանակագրութեան, տե՛ս Brosset, Histoire de la Géorgie I, 264: ⁸⁰ II, 566. ⁸¹ Marquart, 410, Ja'qūbī II, 566. ⁸² Тизенг., Nr. 1814: ⁸³ خالد بن يزيد. ⁸⁴ ابراهيم بن زيد. ⁸⁵ Тизенг., Nr. 1819: ⁸⁶ Марков, Nr. 770: ⁸⁷ Тизенг., Nr. 1830, Dorn, Inv. 39, Nr. 480: ⁸⁸ Тизенг., Nr. 1834 ըստ Tornbergի, Numi Cufici 82, Nr. 327, tab. VI. ⁸⁹ Тизенг., Nr. 1829 ըստ Tornbergի Symbolae II, 250, Nr. 43:

վրայ. կը յիշուին 212⁹⁰, 213⁹¹, 214⁹² եւ 216⁹³ տարիները: Ըստ այսմ պէտք է որ Սալիդ բ. Եագիդ 212էն մինչեւ 217 Հայաստանի ոստիկան եղած ըլլայ: Աբդալլահ բ. Տահիրի Հայաստանի, Ատրպատականի եւ Ջիբալի ոստիկան անուանուածը, զոր Եակուբի 214 տարւոյն մէջ կը յիշէ, անշուշտ պարզապէս անուանական նշանակութիւն մ'ունէր: Եւ որովհետեւ նա անմիջապէս Սորասան գնաց, այս անուանական ոստիկանութիւնն ալ միայն կարճ ժամանակ տեսցր:

Ինչպէս վերը յիշեցինք Սալիդի անուամբ գտնուող առանձին գրամներու վրայ բացի Սալիդէն Իբրահիմ անունով մէկն ալ կը յիշուի: Այս Իբրահիմին հօր անունը գրամագէտներէն տարբեր կերպով կը ներկայացուի: Տիգրէն հասուցէն⁹⁴ 212 տարւոյն դահեկանի մը վրայ իբրեւ աս կը ներկայացնէ, Նեսսելման⁹⁵ 213ի դահեկանի մը վրայ իբրեւ աս: 215—217 տարիներու գրամներու վրայ կը գտնուի աս⁹⁶ էրէմիտաթի թ. 766դ օրինակին վրայ, որ 213 տարիէն է, որոչ կերպով կը կարդացուի ۱۳۰۰ بن محمد. Եւ այս կը գտնուի նաեւ միւս երկու քիչ մը յառաջ յիշուած 212ի եւ 213ի գրամներու վրայ: Մարկով թ. 770 գրամին վրայ 215էն որոչ կերպով կեցած է ۱۳۰۰, ինչպէս որ շատ մը գիտնականներ, որոնք 215—217 տարիներու գրամները հրատարակած են, կը ներկայացնեն: Հաւանականաբար այս անունը ۱۳۰۰ Ատտար կարդալու է: Տիգրէն հասուցէն, էջ 306 հնարաւոր կը համարի, թէ բոլոր այս գրամներու վրայ Իբրահիմ բ. Ղիյեաթ կամ Այեան անունով մէկն ըլլայ: Այս ինծի անհաւանական կը թուի: Հնագոյն գրամները նորագոյններէն գատելու է. գիտցածիս համաձայն առաջիններուն վրայ կը գտնուի Իբրահիմ իբն Չայդ, վերջիններուն վրայ Իբրահիմ իբն Ատտար:

Երրորդ Իբրահիմ մը կը յիշուի 204ի

⁹⁰ Հաւատոյ նշանաբան, վերը Խալիդ էր, վարը Եագիդ. Тизенг., Nr. 1812, Марков, Nr. 766: ⁹¹ Միեւնոյն ձեւով, Eremitage, Nr. 766c կրեւի դանձէն: ⁹² Միեւնոյն ձեւով, Марков, Nr. 768: ⁹³ Միեւնոյն ձեւով, Тизенг., Nr. 1828, Nützel I, Nr. 1418, Шерцль, Nr. 6140: ⁹⁴ Nr. 1814, տախ. IV, Nr. 10: ⁹⁵ Nesselmann, Die orient. Münzen in Königsberg, 72, Nr. 259: ⁹⁶ Марков, Nr. 770; Тизенг., Nr. 1830, p. 306 եւ Dorn, Inv. 39, Nr. 480; Tornberg, Numi Cufici 82, Nr. 327, Tab. VI, 4 միւս. Тизенг., Nr. 1834, p. 306:

Մագիին Բաջունայիսի գրամներու վրայ. վերն ۱۳۰۰ بن محمد, վարը ۱۳۰۰, Տիգրէն հասուցէն, թ. 1766 ունի ۱۳۰۰ (?), նմանապէս Երցալ, թ. 6130. Ֆրէն⁹⁷ ունի ۱۳۰۰⁹⁸ երրորդ անորոչ տառով մը, ۱۳۰۰ بن محمد: էրէմիտաթի օրինակին վրայ, Մարկով, թ. 731, ամէնէն վարի բառը ۱۳۰۰ կամ ۱۳۰۰ է ձեւն ունի եւ այս կը գտնուի նաեւ միւս օրինակներու վրայ: Թէ որոնք էին այս երեք Իբրահիմներն որոչ է: Որովհետեւ առաջին երկուքը միայն առանձին դահեկաններու վրայ, վերջինը միայն Մագիին Բաջունայիսի մէջ կը հանդիպին, մինչ Սալիդ բ. Եագիդ ոստիկանի անունն երկու տեղուան գրամներու վրայ ալ կը գտնուի, կարելի է ենթադրել, թէ անոնք նոյն փողերանոցներու մէջ որ եւ է բարձր պաշտօն ունեցած ըլլան: Ալ-Մամունի կառավարութեան անուննալ գտնուող վերջին ոստիկաններու անուններն՝ Աբդալլահ իբն Մուսադ, ասոր որդին Ալի եւ ալ-Հասան բ. Ալի, գրամներու վրայ չեն հանդիպիր: Ալ-Մամունի վերջին տարիներուն հայկական գրամներուն վրայ կը տեսնուի ալ-Աբբաս իբն Ամիր ալ-Մուսաիմին անունը: Այս անունով հետեւեալ գրամները ծանօթ են. Աւան 217էն⁹⁹ եւ 218¹⁰⁰ եւ Արմինիյեա 217¹⁰¹.

العباس بن محمد رسول الله أمير المؤمنين
 Ֆրէն ի¹⁰² հրատարակած դահեկանն ալ, որ 214 տարիէն է, մի եւ նոյն տիպով է, բայց որովհետեւ ժամանակագրական տեսակէտէ միակն է, թէ էւ հին յետսակողմեան կնքադրոշմով դրոշմուած, սակայն եւ այնպէս 217—218 տարիներուն կը վերաբերի: Տարակոյս չկայ որ այս անձով պէտք է հասկնալ ալ-Աբբաս բ. ալ-Մամուն, որ

⁹⁷ Rec. 12xx, Nr. 295: ⁹⁸ Fränhi քով, Mscr. XXXVIII, 66, Nr. 65 վարի ըստ իբրեւ ۱۳۰۰ [rdād] ներկայացուած է: Ասիական թանգարանի օրինակին վրայ իսկ բառն երկու տեղ զետեւած է. աջակողմեան մասը երկրորդ ۱۳۰۰ է եւ աջ կողմն առաջին ۱۳۰۰, ուր սակայն առաջնատառն փոքրիկ մաս մը տակաւին կարելի է տեսնել: Տարակոյս չկայ, թէ հոս միեւնոյն բառն էր, ինչ որ է էրէմիտաթի օրինակին վրայ: ⁹⁹ Тизенг., Nr. 1833, Марков, Nr. 774, Шерцль, Nr. 6143: ¹⁰⁰ Тизенг., Nr. 1837, Nützel I, Nr. 1318, Brit. Mus. I, Nr. 273: ¹⁰¹ Марков, 877, Nr. 774a: ¹⁰² Nova Suppl. 21, Nr. 301a (Тизенг., Nr. 1823):

213ին ալ-Չէզիրէյի եւ սահմանակից երկիրներու (ատ-Տուրուր եւ ալ-Աւասիմ) շահապետ կը կարգուի¹⁰³, 214ին Բելալ աղ-Դարաբի ալ-Շարիի ապստամբութիւնը զսպելու կը մասնակցի¹⁰⁴, 217ին Փոքր-Ասիա կ'առաքուի ատ-Տուրանա բերդը շիւնելու համար¹⁰⁵ եւ 218ին ալ-Մամունի քովն էր, երբ սա Տարսուսի քովերը վախճանեցաւ¹⁰⁶: Ի նպատակ իրեն 223ին ձեռնաձեռնեցաւ զաւարտութեան մը դո՛հ գնաց¹⁰⁷: Նարկուած դաւադրութեան մը դո՛հ գնաց¹⁰⁷: Որովհետեւ ասոր անուան հայկական զատ ուրիշ գրամներու վրայ չենք հանդիպիր, ուղղակի Հայաստանն ասոր վարչութեան տակ եղած ըլլալու է: Բայց որովհետեւ Եակուբի ուրիշ անուններ կը յիշուին, ասոր իշխանութիւնը միայն առանձին եղած ըլլալու է, իսկ Եակուանուանական եղած ըլլալու է, իսկ Եակուանուանական անձնաւորութիւններն, որոնք անտարակոյս անոր վերին հրամանատարութեան տակն էին, իրականին ոստիկանութեան պաշտօնը վարած են:

218ին Արմինիյեա դրոշմուած արծաթէ գրամի մը վրայ այս անունն ալ չի գտնուիր, այլ ասոր տեղ հաւատոյ նշանաբանին վերեւ Արդ առ-Ռահիման, ստորեւ՝ իբն Խաֆան¹⁰⁸: Ասիկա բոլորովին անձնօթ անձնաւորութիւն մըն է, որ տեղ մըն ալ չի յիշուիր եւ որուն մասին, որչափ գիտեմ, ընդհանրապէս ոչինչ ծանօթ է: Անհաւանական է, որ նա ալ փոխոստիկան էր, եւ այն, որովհետեւ ալ-Հասան բ. Ալի ըստ երեւութիւն նաեւ ալ-Մուսաիմի ժամանակ այս պաշտօնն ունէր, ասկէ յառաջ եւ Ալի իբն Աբդալլահէն յետոյ: Մագիին Բաջունայիսի 217 տարիէն մինչեւ հիմայ ծանօթ միակ դահեկանն ունի միայն հաւատոյ նշանաբանը, բայց ոչ մի անուն¹⁰⁹:

Ըստ այսմ ալ-Ամինի եւ ալ-Մամունի կառավարութեանց շրջանին համար (193—218 Հիդ. = 809—833) կը ստանանք ոստիկաններու հետեւեալ աղիւսակը. Ահմէդ բ. Եագիդ բ. Ուսէյդ ատ-Սուլամի (?) մինչեւ 195:

¹⁰³ Tabarī III, 1100: ¹⁰⁴ Tabarī III, 1101: ¹⁰⁵ Tabarī III, 1111: ¹⁰⁶ Tabarī III, 1140: ¹⁰⁷ Tabarī III, 1256—1265, Weil II, 316—320: ¹⁰⁸ Allan, Numismatic Chronicle 1919, 195: ¹⁰⁹ Lane Poole, Brit. Mus. IX, 58, Nr. 299i = Num. Chron. 1885, 330, Nr. 41:

Ասադ բ. Եազիր բ. Մաղեադ աշ-Շէյ-
բանի 195 (Ղադ., Թ. 49):

Իսհաբ բ. Սուլէյման ալ-Հաշիմի 196
(Ղադ., Թ. 50):

Ասոր տեղապահ ալ-Ֆադլ բ. Իսհաբ
բ. Սուլէյման:

Թահիր բ. Մուհամմէդ առ-Սանանի
196—197 (Ղադ. Թ. 51):

Սուլէյման բ. Ահմէդ բ. Սուլէյման ալ-
Հաշիմի 197 (Ղադ., Թ. 52):

Ալ-Աբբաս բ. Չուֆար (?) 197:

ԱԱ բ. Աբու Աբդալլահ (?) 198—(?):
Հատիմ բ. Հարսամա բ. Այեան 201—
203 (Ղադ., Թ. 53):

Եահեա բ. Մուադ բ. Մուսլիմ 204 (?)—
205 (Ղադ., Թ. 54):

Իսա բ. Մուհամմէդ բ. Աբու Խալիֆ
205—208 (Ղադ., Թ. 55):

Սադաբա բ. Ալի բ. Սադաբա ալ-Ադիբ
(Չուբայթ) 208—209:

Աբդ ալ-Ալա բ. Ահմէդ բ. Եազիր բ.
Ուսէյբ առ-Սուլամի 209—211 (Ղադ.,
Թ. 57):

Խազիր բ. Եազիր բ. Մաղեադ 212—217
(Ղադ., Թ. 58):

Ալ-Աբբաս բ. ալ-Մամուն 217—218,
ասոր ներքեւ՝

Աբդալլահ բ. Մուսադ ալ-Ասադի
(Ղադ., Թ. 59):

Ալի բ. Աբդալլահ բ. Մուսադ ալ-
Ասադի:

Աբդ առ-Ռահման բ. Խաբան (?) :

Ալ-Հասան բ. Ալի ալ-Բադրի ալ-Մա-
մունի (Ղադ., Թ. 60):

Վերջինս գուցէ ալ-Մութասիմի ժա-
մանակ է:

Թարգմ. Հ. Վ. ԻՆՊԻՆՏԵՆ



**ՎՐԵՍՏԱՆԻ ԹԵՄԵՎԵԼ ԵՌԵՋՆՈՐԳ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐՐԵՑՈՒ
ՆԵՄԵՆՆԵՐԸ**

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԳԱՊԵՏ ՂԱՐԻՄԵՑՈՒՆ

Յովհաննէս Կարբեցին յայտնի է մեր
պատմական գրականութեան մէջ. նրա մա-
սին ամբողջ հաստիքներ են գրուած: Այստեղ
մեր նպատակը համեստ է եւ սահմանափակ՝
ուրուագծել Կարբեցու կեանքի եւ գործու-

նէութեան մի քանի կէտերը միայն, որոնք
անհրաժեշտ են ուղիղ ըմբռնելու համար
նրա ստորեւ հրատարակուող նամակները:

Կարբեցու պատմական ասպարէզ էլնելը
անսպասելի երեւոյթ էր եւ պայմանաւո-
րուած էր ուսական նորամուտ «քաղաքա-
կանութեամբ», աւելի ճիշդ՝ Գրաֆ Պաս-
կելի թշնամական տրամադրութեամբ
դէպի Ներսէս Աշտարակեցին: Որքան ան-
սպասելի էր Կարբեցու կաթողիկոսական ա-
թոռին հասնելը, այնքան այնչափով եւ ան-
փառունակ էր նրա կաթողիկոսական գոր-
ծունէութիւնը: Այդ գործունէութեան հիմքը
դրուել էր 1829 թ. Հոկտեմբերին, երբ Պաս-
կելիչը նրա եւ Կարբեցի Սերովբէ վարդա-
պետի խորհրդակցութեամբ որոշեց նրան
տալ Վրաստանի առաջնորդութիւնը, որ ան-
սայթաք տանում էր դէպի կաթողիկոսու-
թիւն, որ Յովհաննէս արքեպիսկոպոսը
ջլատի Ներսէսի աղբեցութիւնը թիֆլիզում
եւ էջմիածնում:

Յովհաննէս Կարբեցին ծնուել է Կարբու-
մօտի Յովհաննապանքում 1762ին պատա-
նէկութիւնն ու երիտասարդութիւնը նա անց-
կացրեց Մոզնում եւ էջմիածնում Ղուկաս
կաթողիկոսի օրով եւ զբաղուեց այն ժա-
մանակուայ դիտելիքներով: Նրա հետագայ
գործունէութեան բնորոշ կողմը կազմում է
նուիրակութիւնը, որպիսի պաշտօնով նա
գնում է Մուշ, Իսպահան, Թիֆլիզ եւ աւելի
ուշ՝ Թոխաթ, Կեսարիա, Ադուանից աշ-
խարհ, Կոստանդնուպոլիս. գործունէութեան
միւս կողմն է, եպիսկոպոսանալուց յետոյ
(1807 թ.), աւագ լուսարարութիւնը:
1825 թ. նա էջմիածնի միարանութեան
խնդրանքը եւ Երեւանի Հիւսէյն խան Սար-
գարի հրամանով նշանակուեց «փոխանորդ
կաթողիկոսի ծայրագոյն կառավարիչ Աթո-
ռային գործառնութեան»:

Կարբեցին չէր կարող պարծենալ իր
գիտութեամբ, բայց նա ուշիմ էր, ճարպիկ
եւ կտրուկ եւ միարանութեան աչքի ըն-
կնող անդամներից մէկն էր: Նա ասում էր
Ներսէս Աշտարակեցուն, բայց վախենում էր
նրանից եւ ոչ միայն մասնակցում էր Սի-
նոզի անդամների սովորական «ամենախո-
նարհ» զեկուցագրերին, որ վերջիններս ու-
ղարկում էին Բեսսարաբիա Ներսէս Աշտա-
րակեցուն, այլ եւ նա այն գրութեան ստո-
րագրողներից մէկն էր, որով Սինոզի ան-
դամները գտնելով (1828 թ. Հոկտեմբերի

13ին), որ վանքի գործերը խախտուել են
Ներսէսի բացակայութեան միջոցին, թույլ-
տուութիւն էին խնդրում Եփրեմ Կաթողի-
կոսի գլխավոր կայսեր եւ խնդրելու, որ
Ներսէսին վերադարձնի Բեսսարաբիայից:
Ահա այդ գրութիւնը.

Հրամայեցի գրել որպէս արժան է
նորին մեծութեան կաթողիկոս
ամենայն Հայոց Եփրեմ:

Վեհափառ Օծութիւն.

Ամենաողորմած Տէր.

Ներսէս բարձր Սրբազան Արքեպիկո-
պոսն նշանակիր Ասպետ, զոր վեհափառ
Օծութիւնը Ձեր սուրբ բարեհաճութեամբ
ձերով՝ գրով եւ բանիւ ընտրեալ եւ հաս-
տատեալ էք նախաձայն անդամ կառավա-
րութեանս եւ ընդհանրական ծայրագոյն
Կառավարիչ սուրբ Աթոռոյս եւ յաջորդ
Ձեր, հեռանալովս աստի ի սրբոյ Աթոռոյս,
ամենայն կառավարութիւնք մեր եւ ազգա-
օգուտ կամ աթոռաչափ գործք եւ առաջա-
դրութիւնք անկարանան ըստ օրինի որպէս
արժանն է ընթանալ, եւ օր ըստ օր է գրեթէ
ի դժուարինս յառաջանան. վասն որոյ ամե-
նախոնարհաբար խնդրեմք յԱստուածարեալ
Օծութեանէ ձերմէ, եթէ կարելի ինչ համա-
րեսլիք եւ պատշաճ, տալ մեզ հրաման՝
խնդրամտոյց լինել գրով առ Նորին կայ-
սերական Մեծութիւնն, զի ամենաողորմա-
ծաբար բարեհաճեցի օր յառաջ վերադար-
ձուցանել զնորին բարձր Սրբազանութիւնն:

Վեհափառութեան ձերում

խոնարհ ծառայք, եւ անդամք կառավա-
րութեան Աթոռոյս
Յովհաննէս Ստեփաննոս եպիսկոպոս
Արքեպիսկոպոս Մանուէլ վարդապետ
Վեհապետեան Յովսէփ վարդապետ:

Յամսեանն Հոկտեմբերի 13,
1828 ամի ի սուրբ էջմիածին:

Որպէս հետեւանք այս գրութեան՝
Եփրեմ կաթողիկոսը 1828 թ. Հոկտեմբերի
18ին պատշաճ բովանդակութեամբ մի-
նչորոշուող ուղղեց կայսեր:
Կարբեցին ազա՛հ էր, շահասէր եւ փա-
ռամոլ: Դեռ արեղայ ժամանակից նա հե-
տամուտ դրամ ժողովելու եւ այդ անում

էր ամենապայանդակ միջոցներով՝ որպէս
նուիրակ, թէ Վրաստանի առաջնորդ. նա
փառասէր էր եւ գաղտնի երազում էր կա-
թողիկոսական գահի մասին: Նա բռնակալ
էր եւ դաժան. բաւական է յիշել այն տա-
ռապանքները, որ կրեց նրա ձեռքից Յով-
հաննէս վարդապետ Ղրիմեցին տարիներ շա-
րունակ եւ կամ միարանութեան ըմբոստ
ելոյթի առթիւ աքսորուած վանականները:
Այդ բոլորով հանդերձ իշխանաւորների մօտ
Կարբեցին համեստ էր, հեղահամբոյր եւ
համակերպուող. վերջապէս նա Ներսէսի
ոխերիմ թշնամին էր եւ այս յատկութիւն-
ները միանգամայն բաւական համարեց Պաս-
կելիչը յանձնելու նրան տխուր դերը, որ
նա կատարեց անցեալ դարի երեսնական
թուականներին:

Վերելը յիշուեց, որ 1829 թ. Հոկտեմ-
բերին Պասկելիչը հրաւիրեց Յովհաննէս
Կարբեցուն Թիֆլիզ եւ որոշեց տալ նրան
վրաստանի առաջնորդութիւնը, որի վրայ
դեռ յաւակնութիւն ունէր Ներսէս Աշտա-
րակեցին հեռուոր Բեսսարաբիայից: Կարբե-
ցու առաջնորդական պաշտօնի մէջ հաստա-
տուելու հրամանը ստացուեց 1830 թ. Սեպ-
տեմբերին, բայց նա դեռ Յունիսիւն Թիֆլիզ
էր գնացել իր հաշիւները մաքրելու Ներ-
սէսի անձնուէր կուսակից Ալամդարեանի եւ
առհասարակ Ներսիսեան զպրոցի հետ: Կար-
բեցին յաջողութեամբ ազատուեց Ալամդա-
րեանից՝ Պասկելիչի օգնութեամբ նրան էջմի-
ածին ուղարկելով, որպէս զի այնտեղ
նա պատժուի կաթողիկոսի ձեռքով եւ Պաս-
կելիչի մեծ ու փոքր արբանեակները՝ իշ-
խան Բէհհուդեան, Սերովբէ վարդապետ
եւ այլն համապատասխան հրահանգներ
ստացան եւ միջոցներ ձեռք առան:

Այս շրջանումն էր ահա, որ ծայր տուե-
ցին Յովհաննէս Կարբեցու նամակները Յով-
հաննէս վարդապետ Ղրիմեցուն: Սերովբէ
վարդապետը 1830 թ. Մայիսին ուղարկուեց
Պասկելիչի կողմից իշխան Վ. Բէհհուդեանի
հետ Եփրեմ կաթողիկոսի մօտ, բռնադա-
տելու վերջինիս, որ Սերովբէին եպիսկո-
պոս ձեռնադրի: Այդ ժամանակ իշխան Բէհ-
բուդեանը եւ Սերովբէն խոստումներով եւ
սպառնալիքներով իրենց կողմ գրաւեցին մի
չարք վանականների, որոնց թուում նաեւ
Յովհաննէս վարդապետ Ղրիմեցուն. եւ
քանի որ վերջինս խոշոր դեր էր խաղում
էջմիածնում որպէս Սինոզի անդամ-ատենա-